Հաստատում եմ:
Դպրոցի տնօրեն՝ Ա.Սարգսյան



Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան
հ.153 հիմնական դպրոցի

# Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման աշխատանքների ծրագիր

Մ/մ նախագահ՝ Ս.Բաղդասարյան

***2023-2024 ուսումնական տարում մեթոդմիավորումը իր աշխատանքները կազմակերպելիս խնդիր է դնում.***

1.Բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման միջոցով նպաստել աշակերտների տրամաբանական և ալգորիթմական մտածողության ձևավորմանը

2.Սովորողների համար բացահայտել հանրահաշվի և երկրաչափության գործնական – կիրառական նշանակությունը

3.Բարձրացնել առարկայի արժեքային համակարգը՝ նպաստելով սովորողների հոգևոր դաստիարակության, ազգային– հայրենասիրական զգացմունքների, անհատների ու ժողովուրդների նկատմամբ հարգանքի ձևավորման վերաբերյալ առարկայի ուսուցման չափորոշչային նպատակի իրականացմանը

4.Նպաստել ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հարցերին, դասավանդվող ուսումնական առարկաների յուրացման ուղղությամբ ուսուցիչների համատեղ աշխատանքին:

***Այս խնդիրներն իրականացնելու նպատակով մեթոդմիավորումը տարվա ընթացքում նախատեսում է.***

1.Քննարկել մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսումնական առակաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ

2.Քննարկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը

3.Կատարել ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկությամբ ներկայացնել դպրոցի տնօրենին

4.Տարվա ընթացքում կազմակերպել ընթերցումներ, զեկուցումներ և քննարկումներ, որոնք կնպաստեն ուսուցիչների դասավանդման որակի բարձրացմանը

5.Պարբերաբար ուսուցիչներին իրազեկել կրթության ոլորտում տեղի ունեցած փոփոխություններին, տեղ գտած նորություններին, անհրաժեշտության դեպքում կազմակերպել մեթոդական օգնության

6.Ուշադրության կենտրոնում պահել ուսման գործընթացից ետ մնացող աշակերտներին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելով նրանց մոտ ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելով

7.Նպատակային աշխատանք ծավալել այն աշակերտների հետ, ովքեր հետաքրքրվում են բնագիտական առարկաներով, ինչպես նաև ապահովել նրանց մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին

8.Միջին դպրոցում ուսուցման գործընթացը նպատակաուղղել ի նպաստ ավարտական քննությունների բարեհաջող հանձնմանը

9.5-րդ և 7-րդ դասարաններում առարկայական ծրագրերը և թեմատիկ պլանները կազմել ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան

10.Ուսուցման գործընթացի կազմակերպման ընթացքում նպաստել աշակերտների ՏՀՏ-ներից արդյունավետ օգտվելուն

11.Դասընթացի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցման ընթացքում դիմել ՏՀՏ-ների օգնությանը

12.Աջակցել սովորողներին միջազգային մրցույթների մասնակցությանը:

13.Աջակցել ուսուցիչներին կամավոր ատեստավորմանը նախապատրաստվելիս

14.Մեթոդմիավորման նիստերի քննարկվող խնդիրների թեմատիկան պետք է բխի ուսումնադաստիարակչական ընդհանուր ուղղություններից: Մեթոդմիավորման նիստերի հիմնական նպատակը ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հարցերի, դասավանդվող ուսումնական առարկաների յուրացման ուղղությամբ ուսուցիչների համատեղ քննարկումն է

# *2023-2024 ուստարվա ծրագիր*

**Օգոստոս- սեպտեմբեր**

1 Ուսուցիչներին մեթոդական գրականությամբ ապահովում, առարկայական նոր ծրագրերի չափորոշիչների և դասագրքերի ուսումնասիրում և քննարկում Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, մ/մ նախագահ

2 2023-2024 ուստարվա I կիսամյակի դասաբաշխում, թեմատիկ ծրագրերի կազմում և հաստատում Տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, մ/մ նախագահ

3 Մեթոդմիավորման 2023-2024 ուստարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում Մ/մ նախագահ, անդամներ

4 Բանավոր, գործնական, նախագծային և թեմատիկ աշխատանքների հաճախականության թվաքանակի և գնահատման առանձնահատկությունների որոշում: Մ/մ նախագահ, անդամներ

5 Թեմատիկ և գործնական աշխատանքների վերանայում և հաստատում Մ/մ նախագահ, անդամներ

6 Հատուկ ուշադրություն դարձնել և անհատական աշխատանք տանել ԿԱՊԿՈւ աշակերտների հետ: Մ/մ նախագահ, անդամներ

7. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում Մ/մ նախագահ

8. 5-րդ և 7-րդ դասարաններում առարկայական ծրագրերը և թեմատիկ պլանները կազմել ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան Մ/մ նախագահ, անդամներ

9. 7-րդ դասարաններում ԲՏՃՄ առարկաներից նախապատրաստել և ներկայացնել նախագծային (հետազոտական) աշխատանքներ, որոնց մեջ ներգրավել 7-րդ դասարանի բոլոր աշակերտներին Մ/մ նախագահ, անդամներ

*Հոկտեմբեր*

1 Մեթոդական զեկուցում «Ձևավորող գնահատման բաղադրիչները» Մ/Մ անդամներ

2 Միջին դպրոցում բնագիտական առարկաների դասավանդման մեթոդների ուսումնասիրություն Մ/Մ նախագահ

3 Թեմատիկ և գործնական աշխատանքների կատարողականի ստուգում /որակ, առաջադիմություն/ Մ/Մ նախագահ

4 Փոխադարձ դասալսումներ, քննարկումներ. մեթոդմիավորման յուրաքանչյուր անդամը՝ շաբաթական 1 անգամ: Առաջավոր մանկավարժական փորձի փոխանակում Մ/Մ նախագահ

5 Առարկայական շաբաթներ՝ բնագիտական առարկաներ /09-20/, մաթեմատիկա/ինֆորմատիկա /02-06/ Մ/Մ նախագահ

6 matyan.emis.am-ում կատարվող աշխատանքների վերահսկում Մ/Մ նախագահ

7 Անհատական աշխատանք ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետՄ/մ նախագահ և անդամներ

8 Աշխատանք օլիմպիական ռեզերվի հետՄ/մ նախագահ և անդամներ

9 Նախագծային աշխատանքներ հանրահաշվից, աշխարհագրությունից, կենսաբանությունից Մ/մ նախագահ և անդամներ

*Նոյեմբեր*

1 Առցանց օլիմպիադաների կազմակերպում և անցկացում բնագիտական առարկաներից Ուսուցիչներ

2 Զեկուցում՝ «Նախագծային մեթոդը՝ սովորողների ակտիվ մասնակցություն ապահովող ուսուցման մեթոդ» Զեկուցող՝ Կ.Մաթևոսյան

3 Թեմատիկ և գործնական աշխատանքների կատարողականի ստուգում /որակ, առաջադիմություն/ Մ/մ նախագահներ

4 Համակցված դասերի անցկացման վերահսկում
Մ/մ նախագահ և անդամներ

5 Ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման իրականացումը դասապրոցեսին Մ/մ նախագահ

6 matyan.emis.am -ում կատարվող աշխատանքների վերահսկում, արդյունքների քննարկում Մ/Մ նախագահ

7 Անհատական աշխատանք ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետՄ/մ նախագահ և անդամներ

*Դեկտեմբեր*

1 Առաջին կիսամյակի ծրագրերի կատարողականի ստուգում Մ/մ նախագահ

2 Աշխատանք օլիմպիական ռեզերվի հետ Մ/մ նախագահ

3 Զեկուցում՝ <<ՏՀՏ-ն մեր կյանքում>> Ա.Ղուկասյան

4 Ամփոփիչ աշխատանքների անցկացման ժամանակացույցի հստակեցում, տարբերակների կազմում Մ/մ նախագահ, անդամներ

5 Թեմատիկ և գործնական աշխատանքների կատարողականի ստուգում /որակ, առաջադիմություն/ Մ/մ նախագահ և անդամներ

6 matyan.emis.am -ում կատարվող աշխատանքների վերահսկումՄ/Մ նախագահ

7 Աշխատանք <<Կենգուրու>> միջազգային մրցույթի մասնակիցների հետ /նախորդ տարիների տարբերակներով/ Մ/մ նախագահ և անդամներ

8 Հատուկ ուշադրություն է դարձնել և անհատական աշխատանք տանել ԿԱՊԿՈւ աշակերտների հետ:
Մ/մ նախագահ և անդամներ

9 I կիսամյակի կատարած աշխատանքի վերլուծություն, հաշվետվությունների կազմում Մ/մ նախագահ